Վերացականության սահմանները կամ Հայաստանի անձնատվության նախագիծ-ծրագիրը

27 February, 2009 10:23:00

ԽՍՀՄ լուծարումը ոչ միայն թույլ տվեց վերականգնել Հայաստանի պետական անկախությունը, այլև երկիրը կանգնեցրեց ինչպես նոր, այնպես էլ XX դարի 20-ական թվականներից ժառանգություն մնացած բարդ ու բազմաբնույթ մարտահրավերներին դեմ հանդիման:

Նորից հատուկ սրություն և հրատապություն ձեռք բերեց հայ ժողովրդի անվտանգ գոյության և մերօրյա Հայաստանի ազգային անվտանգությունն ապահովելու անհետաձգելի խնդիրը:

Նորից ծառացավ թուրքական սպառնալիքը՝ ադրբեջանական ագրեսիայի, թուրքական շրջափակման տեսքով ուղեկցվող արևմտյան դիվանագիտության ավանդական խարդավանքներով, Մոսկվայի՝ 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական եղբայրության պայմանագրից բխող բացասական ազդակներով:

Ուստի և զարմանալի չէ, որ Հայաստանի քաղաքական ղեկավարությունը անկախության առաջին վայրկյաններից ստիպված էր որոնել նորանկախ պետության անվտանգության կայուն կռվաններ, իսկ գիտաքաղաքական միտքը, բոլոր ելևէջներով հանդերձ, ձեռնամուխ եղավ գիտական հետազոտությունների ու նրանց արդյունքների գործնական կիրառության դժվարին, սակայն անհետաձգելի գործին:

Այս շարքում առանձնանում է դեռևս խորհրդային հեռավոր տասնամյակներից հայ հասարակությանը քաջ հայտնի կուսակցական գործիչ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), ՀՀ զինված ուժերի գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ղեկավար Հայկ Ս.Քոթանջյանն ու միայն վերջերս նրա կողմից հրատարակված «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» (Եր., 2008) ստվարածավալ (604 էջ) եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հավակնոտ գործը, որն, ըստ էության, նպատակ ունի դառնալ հայ ժողովրդի և մերօրյա Հայաստանի (+ԼՂՀ) անվտանգության նախագիծ-ուղեցույցը:

Առաջադրված խնդրի լրջությունը և, անշուշտ, հեղինակի հանրաճանաչ լինելն ու զբաղեցրած դիրքը հանրապետությունում որոշումների կայացման հիերարխիայում թելադրում են անդրադառնալ, ինչ-որ տեղ բծախնդրությամբ, հրապարակման, նախ, անսովոր կառուցվածքին,

այնուհետև, բովանդակային հիմնական թեզիսներին, նրանց շրջանակում այնքան չարչրկված Արցախի հիմնահարցին:

Եվ այսպես, առաջին հայացքից գիտական մենագրության տպավորություն թողնող աշխատանքը՝ ծանրաբեռնված մեծարգո գեներալ-մայորի և նրա ծառայության ու կենսագրության հետ առնչվող բազմաբնույթ լուսանկարներով, իրականության մեջ հեղինակի տարբեր տարիների աշխատանքների և կիսապաշտոնական ու պաշտոնական փաստաթղթերի ժողովածու է, որոնց հեղինակային պատկանելիությունը որոշելը առաջին հայացքից այնքան էլ հեշտ գործ չէ: Այդ իմաստով, իրոք, աշխատանքն իր տեսակի մեջ եզակի է, մանավանդ, եթե նկատի ունենանք նաև հանրապետությունում հայտնի քաղաքական գործիչների ազգանունների անվերջ շարքի թվարկումը: Անշուշտ, եթե չլիներ աշխատանքի հավակնոտ բնույթը, այս «նրբությանը» չարժեր և անդրադառնալ, սակայն գիտական ճանաչողության տեսանկյունից նման մտահղացումը կյանքի է կոչում նույն գիտական ճանաչողությանը խոչընդոտող «թատրոնի ուրվականի» (Ֆրենսիս Բեկոն) բացասական ախտանիշը:

Այնուհետև, աշխատանքը մի մասով ՀՀ բարձրագույն քաղաքական ղեկավարության (այժմ՝ հիմնականում նախկին) տեսակետների և առաջադրած մտքերի մեկնաբանություն-հաստատումներն են և դա, ինչպես մեզ է թվում, թույլ է տվել հեղինակին հիմնականում անտեսել համապատասխան առկա գրականության վերլուծությունը: Եվ որպես արդյունք, աշխատանքը ձեռք է բերել նկարագրական-տեղեկատվական երանգ:

Հայկ Ս. Քոթանջյանը պնդելով, որ Հայաստանի արտաքին անվտանգության միջոցը «միջազգային ինտեգրումն է և փոխլրացումը»՝ այդ շղթայից ,ըստ էության, դուրս է թողնում նրա հիմնարար և առաջնահերթ բաղադրիչներից Իրանին, որը ՀՀ ազգային անվտանգության հիմնախնդիրներին նվիրված աշխատանքում, պատկերացրեք, հանդես է գալիս որպես շարքային մի պետություն: Այսպիսով, «փոխլրացման սկզբունքը» վերածվում է «Արևմուտք-Արևելք» առանցքի ռազմավարական նշանակության ցուցադրման: Մինչդեռ, ինչպես կասեր Նոգալեսը «հավասարակշռության անփոփոխ օրենքը պահանջում է և միշտ պետք է պահանջի նրա բանական նորմերի անվիճելի իրագործում, ընդսմին ոչ միայն կենդանի նյութի հանդեպ, այլև նրանում, ինչը վերաբերում է սովորաբար «քաղաքակիրթ ազգեր» կոչվող էթնիկական միավորումների դրության կայունությանը» (Ногалес М.Р. де Четыре года под полумесяцем. М., 2006, էջ 345):

Ժամանակին Լեոն քննադատաբար վերլուծելով «քաղաքակիրթ ազգերի» միջև հավասարակշռությունը պահպանել չկարողանալու հայոց մեծերի սխալը՝ գրում էր, որ կրոնակից կապը մի ուժեղ պետության հետ (այն ժամանակ՝ Բյուզանդիոնի, այսօր՝ Բրյուսելի) «միանգամայն բավական էր, որ հայերն արհամարհեն իրենց ոչ կրոնակից դրացիներին և արհամարհեն ոչ միայն նրանց կրոնն ու մշակույթը, այլ նույնիսկ նրանց պետական ույժը: Այդ ույժը, որ օղակում էր Հայաստանը հարավից և արևելքից Իրանն էր» (Լեո, Հայ կղերական դիվանագիտությունը, Եր., 2002, էջ 26): Կարծում եմ խոսքը ասված է շեշտակի և ճշգրիտ, սակայն մեր օրերի կտրվածքով՝ այդուհանդերձ «պակասորդով»: Եվ այդ պակասորդը ապագայի ահռելի կարողականություն ամբարած զգայուն ու բարեկամ Արաբական Արևելքն է:

Աշխատանքն ունի, գոնե հեղինակային մասով, մտահայեցողական բնույթ և տրանցենդենտալ է: Այս թերությունը, ցավոք, բնորոշ է հետխորհրդային շրջանի նմանատիպ քաղաքագիտական/ռազմագիտական հետազոտությունների զգալի մասին: Եվ դա արդյունք է այն աններելի արատավոր պրակտիկայի, երբ Հայաստանի և հայ իրականության շահերը շոշափող կենսական նշանակության հիմնախնդիրները քննվում են Հայաստանի քաղաքական պատմության շրջանակներից դուրս և անտեսելով հայ (ներառյալ սփյուռքյան) գիտաքաղաքական-քաղաքակրթական գրականության լուրջ եզրակացությունները:

Էլ ավելի մտահայեցողական է, նաև վտանգավոր Հայաստանի ներկայի ու գալիքի համար, հեղինակի՝ Հարավային Կովկասում հակամարտությունների լուծման մոդելը: Ապավինելով «օրենք ֆետիշին» և հնարավոր համարելով «օրենքի շրջանակներում (հասկանալի չէ, որ օրենքի և որ շրջանակներում.-Ս.Տ.) լուծել տարածաշրջանային հակամարտությունները, առաջին հերթին ղարաբաղյան հիմնա-խնդիրը, և կանխել պատերազմի վերսկսման վտանգը» (էջ 103), Հայկ Ս.Քոթանջյանը բացում է դեղատոմսի իր փակագծերը. «Ինքնորոշման <...> հանրաքվեն պետք է հաջորդվի հակամարտության ամբողջական լուծման ծրագրով՝ խաղաղության պայմանագրի ստորագրմամբ, պահվող տարածքների հանձնմամբ, իրենց տները փախստականների վերադարձով (ընդգծումը իմն է.- Ս.Տ.), շրջափակման ու էմբարգոյի դադարեցմամբ, միջազգային խաղաղապահ ուժերի կողմից [աբստրակտ] մարդկանց (որ ազգի.- Ս.Տ.) անվտանգության ապահովմամբ և համաշխարհային տերությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրվող երաշխիքներով» (էջ 85):

Հեղինակի առաջարկած մոդելը, այսպիսով, ըստ էության, Հայաստանի կատարյալ անձնատվության ծրագիր է:

Քանզի՝

- «պահվող տարածքների հանձնումը» ենթադրում է Ադրբեջանի վրա ռազմավարական ճնշման բացառիկ կետերից՝ Եվլախի (հայկական դիրքերը գտնվում են մոտ 40 կմ հեռավորության վրա այս կարևորագույն հանգույցից) և Հորադիզի ուղղություններ, հայոց բանակի նահանջ, որը աներևակայելով կուժեղացնի թշնամու հնարավորությունները,
- Հայաստանի (+ ԼՂՀ) փաստական սահմաններն իր բնական դաշնակցից՝ Իրանից կկրճատվեն 170 կմ-ով, հարուցելով վերջինիս եթե ոչ թշնամանքը, ապա օտարումը Հայաստանի Հանրապետությունից. ՀՀ իրական և անվտանգության լուրջ համակարգի մասին խոսելն անգամ կդառնա զավեշտական,
- հայկական զինուժը թողնելով բնական պաշտպանական դիրքերը, ռազմաճակատի գիծը կերկարացնի հարյուրավոր կմ-ներով, իսկ «Լաչինի միջանցք» կոչվածը հյուսիսից և հարավից ադրբեջանական ճնշումով կարելի կլինի փակել ռազմական մի գործողությունով,
- միջազգային իրավունքի տեսանկյունից ԼՂՀ-ից, որի անկախության ճանաչումը համառորեն մերժում է Ադրբեջանը, ադրբեջանցի փախստականներ չկան. այս հարցը հեղինակի մոտ հստակություն չունի, որը չափազանց կարևոր է բանակցային գործընթացի համար:

Թուրքական ռազմաքաղաքական մշակույթի համատեքստում դժվար չէ ենթադրել, որ «շրջափակման ու էմբարգոյի դադարեցումը» կարելի է դադարեցնել ցանկացած պահի, շարունակելով էլ ավելի թուլացած ու հյուծված Հայաստանի մեկուսացումը: Եթե Հայկ Ս. Քոթանջյանը տեղյակ լիներ Երզնկայից մինչև Սարդարապատ ու այնուհետև (1918 թ.) թուրքական արշավանքի իրական ընթացքին, կարծում ենք, տվյալ առաջարկը չէր անի կամ առնվազն վերապահումներ կունենար:

Համաշխարհային սպանդի բովով անցած ժողովրդի «պատմական փորձի» շրջանակներում քաղաքական հավկուրություն է «միջազգային խաղաղապահ ուժերին» ապավինելը, առավել ևս խոշոր տերությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրվող «երաշխիքների» պատրանքներով ապրելը: Բավական է հիշել հայկական հարցի «զարգացումը» Սան-Ստեֆանոյից (1876 թ.) և նրա միջազգայնացումը Բեռլինի (1876 թ.) կոնգրեսից սկսած, բարենորոգումների ռուսական ծրագիրը (1912-1914 թթ.), ֆրանսիացի «խաղաղապահների» կողմից Կիլիկիայի նվիրաբերումը (1921 թ., հոկտեմբերի 20) Քեմալին և Արևելյան Հայաստանի աճուրդը (1921 թ.) Ռուսաստանի կողմից, և վերջապես Սումգայիթի (1988 թ., փետրվար) ու Բաքվի (1990 թ., հունվար) երաշխիքները, տեսնելու համար առաջարկված մոդելի սնամեջությունը:

Եվ վերջինը՝

- Անդրկովկասի իբրև թե անվտանգության առաջարկվող համակարգը, որի հիմքում, հայկական կողմի կամքից անկախ, Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական գործարքն է, ավտոմատ կերպով Հայաստանին թողնում է մենակ վրաց-ադրբեջանական «սրտակից եղբայրության» դիմաց և նրան վերածում վերջիններիս իրավազուրկ վասալ,
- անտեղի է և անհիմն Կոսովոյի հակամարտության հետ Արցախի կնճռի համեմատությունը: Այստեղ համանմանությունը սոսկ արտաքին է: «Ալբանական» Կոսովոյի նախադեպը «ադրբեջանական» Նախիջևանն է: Բալկաններում Հայաստանի դաշնակիցը Սերբիան է, Թուրքիայինը (Ադրբեջանինը)՝ այսօրվա Կոսովոն: Հայկական կողմի համար չափազանց օգտակար կարող է լինել, նույնիսկ պարտադիր է Հաագայի Միջազգային դատարանում Հարավսլավիայի առաջնորդ Սլոբոդան Միլոշևիչի 2002 թ. փետրվարի ելույթի, գոնե, լուրջ ընթերցումը (Տե՛ս՝ «Диалог» 5, май, 2002, էջ 58-96):

Արտառոց է, անշուշտ, և հակապատմական, առանց որևէ չափորոշիչի կիրառման, Հայկ Ս. Քոթանջյանի կողմից, Թուրքիան «ժամանակակից ժողովրդավարական հանրապետություն» (էջ 48) հռչակելը, ոճրային իր անցյալով հպարտացող գեներալ-փաշաների մի երկիր, որի իրական արժեքը «ուրվային» («խորքային») պետության մեջ է: Այս մասին չափազանց տպավորիչ է արտահայտվում Ամստերդամի համալսարանի պրոֆ. Էրիկ Ժան Ցյուրխերը:

Հայաստանի քաղաքական պատմության էվոլյուցիան XIX-XX դարերում պնդում է, դժբախտաբար, որ [ամեն գնով] խաղաղությունը չի կարող Հայաստանի իդեալը լինել:

Խնդրի նման դրվածքը Հայաստանի վերջնական անեացման ուղիղ ճանա-պարհն է:

Հիրավի', իզուր չի ասված.

«Կռիվը գեշ բան է անկասկած, բայց վատթարագույն է հայրենի երկիրը խաղաղությամբ օտարին ծախելը» (Ռուբէն):

Ս. Տիգրանյան

Powered by Vivvo CMS v4.0